



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

344.9  
7-94

1921

79 MAR 2010

344.98

Հրատարկութիւն Ալեք-պօլի Շրջ. Ցեղ-  
կոմի ժողով. Լուսաւորութեան բաժնի. № 4



ԳՐՈՒՏԱՐԱԿԱՆ  
ԳԵՏԱՐԱՆԸ

1003  
14486

Ալեքսանդրապոլ  
Տպարան Հայաստ. Սոց. Խոր. Հանրապ.  
1921թ.

347.9  
Դ-94

347.9  
7-94

23 JUL 2013

38732

340  
1448-742

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

- Բուրժուական հասարակութեան դատարար:
- Դատաւորներին պէտք է ընտրէ աշխատաւորութիւնը:
- Միասնական ժողովրդական դատարան:
- Ցեղափոխական տրիբունալներ:
- Պրոլետարական դատարանի պատիժները:
- Պրոլետարական դատարանի առաջան:

### 1. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ.

Բուրժուական պետութիւնը շատ ինստիտուտներ ունի, որոնք ծառայում են աշխատաւորական մասսաները ճնշելու ու խարելու գործին. այդպիսի ինստիտուտներից մէկն է նաև բուրժուական դատարանը:

Այդ պատւառը հիմնարկութիւնը իր դատավճիռներում առաջնորդում է այնպիսի օրէնքներով, որոնք կազմուած են յօդուտ շահագործող դասակարգի, Այդպիսով, դատարանի կազմը ինչպիսի մարդկանցից էլ բաղկացած լինի, նաև զիտուններում արդէն առաջուց սահմանափակ-

ւած է զանազան օրէնսգրքերի հատորներով, ուր գրօշմւած են կապիտալի ունեցած բոլոր արտօնութիւնների և աշխատաւորական մասսաների իրաւաղըկութեան մասին:

Իսկ ինչ վերաբերում է բուրժուական դատարանի կազմակերպութեանը, — այդ միանգամայն համապատասխանում է բուրժուական պետութեան տիպին: Բուրժուական պետութիւնն, ուր քիչ շատ անկեղծ է, ուր ստիպւած է դէն ձգել երեսպաշտութիւնը, որպէսզի տիրապետող դասակարգերին նպաստաւոր վճիռներ կայացնի, — այնտեղ նա դատաւորներին վերևից է նշանակում, իսկ եթէ ընտրում են՝ այդ դէպքում ընտրութեանը մասնակցում է հասարակութեան միայն արտօնեսուլ մասը:

Ընդհակառակը, եթէ մի երկրում կապիտալը բաւականաշափ վարժեցրել է մասսաններին, բաւականաշափ հպատակացրել նրանց և մասսանները նբա օրէնքները համարում են նաև իրենց օրէնքներ, այնտեղ որոշ շափով թոյլ է տրւում, որ աշխատաւորներից դատաւորներ լինեն. ինչպէս և թոյլ է տրւում նրանց պարլամենտի անդամներ ընտրել իրենց շահագործողներին կամ վերջիններիս լակէյներին: Եյսպէս առաջ եկաւ և գոյութիւն ունեցաւ երդիեալների դատարանը, որի շնորհիւ կապիտալի օգտին կատարւած դատավճիռները կարելի էր հոչա-

կել որպէս որպէս «Ժ լիի» դատավճիռներ:

2. ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻՆ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԻ ԱՃԽՍՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

II ինտերնացիօնալի մէջ մտնող սոցիալիստների ծրագրներում պահանջ զրւեց, որ դատաւորներին ցնտրի ժողովուրդը:

Պրոլետարական դիկտատուրայի ժամանակաշրջանում այդ պահանջը նոյնքան անիրազործելի և նոյնքան յիտադիմական է հանդիսանում, որքան ընդհանուր ընտրողական իրաւունքի կամ ամբողջ ժողովուրդը զինելու պահանջը: Երբ պրոլետարիատը իշխանութիւնն իր ձեռքն է վերցնում, նա չի կարող թոյլ տալ, որ իր դատաւորներն իր դասակարգային թշնամիները լինեն: Նա չի կարող ազատ լոյս ընծայել և պահապան կանգնել այնպիսի զեկրետների, որոնց ուժով կարելի լինէր ոչնչացնել կապիտալի տիրապետութիւնը, կապիտալի ներկայացուցիչներին կամ խոշոր կալւածատիրութիւնը: Վերջապէս քաղաքացիական և քրէական գործերի անվերջ շարքում դատական պատճառարանութիւնը պէտք է արւի նոր կառուցւող սոցիալիստական հասարակութեան ոգով:

Ուստի և խորհրդային իշխանութիւնը ոչ միայն ոչնչացրել է հին դատարանի ապարատները, որ, կապիտալին ծառայելով հանգերձ,

կեղծաւորութեամբ իրեն հռչակում էր որպէս  
ժողովրդի ձայն, — այլ և կառուցել է նոր զա-  
տարան, երբէք չը թագցնելով դրա զասակար-  
գային բնոյթը: Յանձինս հին դատարանի, շա-  
հագործողների դասակարգային փորբամասնու-  
թիւնը դատում էր աշխատաւոր մեծամասնու-  
թեանը: Պրօլետարական դիկտատուրայի զա-  
տարանը աշխատաւոր մեծամասնութեան դա-  
տարան է՝ շահագործող փորբամասնութեան  
համար: Նա այդպէս էլ կառուցւած է. դատա-  
ւորներն ընտրում են միմիայն աշխատաւորու-  
թեան կողմից: Դատաւորներն ընտրում են մի-  
միայն աշխատաւորների շարքերից: Շահագոր-  
ծողներին թողնում է միայն դատանոր իրա-  
ւունքը:

### 3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ.

Բուրժուական հասարակութեան մէջ դատա-  
րանի կազմակերպութիւնը չափազանց մեծածա-  
ւալ և խառն ի խուռան է: Բուրժուական իւրիստ-  
ները շատ են պարծենում նրանով, որ շնորհիւ  
դատական ինստանցիաների երկար սանդուխքի,  
արդարադատութիւնը լիովին ապահովում է և  
դատաստանական սխալմունքների թիւը մինի-  
մումի համար: Խսկապէս գործի փոխադրու-  
թիւնը մի ինստանցիայից միւսը միշտ օգտա-  
կար է եղել և շարունակում է օգտակար լինել

ունեար դասակարգի համար: Ազգաբնակութեան  
ունեոր խաւերը, իրենց տրամադրութեան տակ  
ուն ՚նալով իրաւաբանների մի ամբողջ կորպուս՝  
մէ յամայն հնարաւորութիւն ունեն աւելի  
բարձ ինստանցիաներում գործն իրենց օգտին  
վճռել ուու, մինչդեռ գանգատաւորը չքաւոր-  
ութիւնի ստուած է լինում այլևս չը հետեւել  
գործի ընթացք: Եսու նիւթական մեծ միջոց-  
ներ է պահանջու: Դի փոխադրութիւնը զա-  
նազան ինստանցք ապահովում է ռար-  
դարադատութիւնը: Են այն իմաստով, որ  
ապահովում է դատավայրը՝ յօգուտ շահագոր-  
ծող գրուպաների:

Պրօլետարական պետութեան ժողովրդական  
միասնական գատարանը կրնատում, մինիմումի  
է հասցնում այն ժամանակամիջոցը, որով անց-  
նում է գործը դատարանին յանձնելու ըռպէից  
մինչև վերջնական դատավճիռը:

Դատարանական վոլոկիտան (գործի ձրգ-  
ձկումը) մեծ չափով կրնատում է, և եթէ դեռ-  
ևս զոյտութիւն ունի, այդ միայն խորհրդային  
բոլոր հիմնարկութիւնների ընդհանուր անկատա-  
րելիութեան շնորհիւ է: Պրօլետարական դիկ-  
տատուրան իր առաջին ամիսներում ու տարի-  
ներում անկարող էր ամեն ինչ կատարեալ դար-  
ձնել: Դատարանը մատչելի է դառնում ազգա-  
բնակութեան ամենազբատ և խաւար մասերին

և աւելի մատչելի կը դառնայ, երբ կը վերջանայ քաղաքացիական կուլիսուր պերիօդը, երբ հասարակապետութեան քաղաքացիների բոլոր փոխյարաբերութիւնները աւելի մասյուն բնոյի կը կը են: «Պատերազմի ժամանակ՝ օրէնքները լըռում են», — ասում են հոգմէացիները. քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ օրէնքները յօգուտ աշխատաւոր մասսաների՝ չեն լրում. ժողովրդական դատարանները գործում են. բայց ամբողջ հասարակութիւնը դեռ հնարաւորութիւն չի ունեցել ծանօթանալու նոր դատարանի էութեան հետ և նըա բոլոր առաւելութիւնները գնահատելու:

Այն ժամանակ, երբ խորտակւում են հին հասարակական կարգերն ու դրանց տեղ նորերը կառուցւում, — ժողովրդական դատարանների դերը չափազանց դժւար է:

Խորհրդային օրէնքը լուսադրութիւնը չի կարողանում հասնել առաջ ընթացող կեանքին:

Բուրժուական կալւածատիրական կարգերի օրէնքները փոխւած են. պրօլետարական պետութեան օրէնքները գրւած են միայն ընդհանուր գծերով և լրիւ երբէք չեն կարող գրւել: Թանւորական դասակարգը չի ստածում յաւերժացնել իր տիրապետութիւնը և նրան հարկաւոր չեն զանազան օրէնսդրքերի տասնեակ հատորներ:

Հիմնական դեկրետներից որիէ մէկի մէջ իր կամքն յայտնելով, այդ դեկրետների լուսաբանութիւնն ու կիրառումը կարող է յանձնաբարել ժողովրդական դատաւորներին, որոնք ընտրւում են աշխատաւորութեան կողմից. Կարեռն այն է, որ այդ դատարանների դատավճիռները արտայայտեն բուրժուական կարգերի, սովորութիւնների և հոգեբանութեան վիրաբերմամբ տեղի ունեցած ամբողջ գժտութիւնը, որ պէսզի ժողովրդական դատաւորները գործերը վճռեն պրօլետարօքէն, սոցիալիստաօքէն, և ոչ թէ բուրժուական խղճով: Հին կարգերի կործանման միջոցին և պրօլետարիատի իրաւունքների իրագործման ժամանակ առաջացան ահազին քանակութեամբ գործեր, - ժողորվդական դատաւորները լիովին հնարաւորութիւն ունեն լրացնելու այն յեղաշրջումը, որը սկսւեց 1917 թւի յեղափոխութեամբ և որը պէտք է տարածւի խորհրդային հասարակապետութեան քաղաքացիների բոլոր փոխյարաբերութիւնների վրայ: Միւս կողմից, յեղափոխական էպօխու փոխական առաջացած մեծաքանակ գործերը և նելիս, բնակչական-քրէական գործերը ըննելու ժողովրդական դատաւորները պէտք է միանգամայն նոր վերաբերմունք ցոյց տան զէպի այն յանցանքները, որ գործւում են յեղափոխական պրօլետարիատի կողմից, և սահմանւած

պատժական միջոցների ընոյթը պէտք է ամ-  
բողջապէս յեղափռին:

#### 4. ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՐԻԲՈՒՆԱԼՆԵՐԸ

Եշխատաւորութեան կողմից ընտրւած փո-  
փոխելի ժողովրդական դատարանը,որի մէջ դա-  
տաւորի իրաւունքը հերթով պէտքէ իրակա-  
նացնի աշխատաւորներից իւրաքանչիւրը,-կոմու-  
նիստական կուսակցութիւնն այդ դատարանը  
ընդունում է օրպէս նորմալ դատարան՝ սոցիա-  
լիստական պետութեան: Իսկ քաղաքացիական  
աւելի սուր պատերազմի էպօխայում անհրա-  
ժեշտութիւն է ներկայացնում ժողովրդական  
դատարանների շարքին կազմակերպել նաև յե-  
ղափոխական տրիբունալներ: Յեղափոխական  
տրիբունալների խնդիրը նրանում է կայանում,  
որ պրօլետարական յեղափոխութեան թշնամի-  
ներին շուտափոյթ և անինայ դատի: Այդ դա-  
տարանները շահագործողներին ճշշելու գործիք-  
ներ են հանդիսանում և այդ տեսակետից նրանք  
պրօլետարական ինքնապաշտպանութեան և յար-  
ձակման նոյնափակի, օրգաններ են, ինչպէս են՝  
Կոմիտիբ Դւարդիան, Կարմիր Բանակը, Արտա-  
կարդ Յանձնաժողովները: Այդ իսկ պատճառով  
յեղափոխական տրիբունալները աւելի քիչ գե-  
մոկրատիկ հիմքերով են կազմակերպւած, քան  
թէ ժողովրդական դատարանները: Նրանք խոր-

հուրդների կողմից են նշանակւում, և ոչ թէ  
ուղղակի աշխատաւոր մասսաների կողմից ընտ-  
րւում:

#### 5. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏԻԺՆԵՐԸ:

Կապիտալի գէմ մզած արիւնոտ կռւում  
բանւորաշան զասը չի կարող հրաժարել պատ-  
ժական ամենաբարձր միջոցից, որ գործադրե-  
լու է իր յայտնի թշնամիների նկատմամբ: Մահ-  
ան պատժի վերացումն հնարաւոր չէ, քանի որ  
դեռ շարունակւում է քաղաքացիական պատե-  
րազմը: Բայց պրօլետարական դատարանի զուտ  
օրիեկտիւ համեմատութիւնը բուրժուական հա-  
կայեղափոխական դատարանի հետ, ցոյց է տա-  
լիս բանւորական դատարանների արտակարգ  
մեղմութիւնը՝ բուրժուական իրաւագիտութեան  
դահիճների համեմատութեամբ: Ճատ ծայրահեղ  
դէպքերում են մահւան դատավճիւներ կայաց-  
ւում: Այդ առանձնապէս բնորոշ է պրօլետա-  
րական դիկտատուրայի առաջին ամիսների դա-  
տական պրօցէսների համար: Այսուղ բաւական  
կը լինի յիշատակել այն փաստը, որ յայտնի  
Պուրիշկեիչին Յեղափոխական Տրիբունալը Պե-  
տերբուրգում իր ժամանակին վճռեց միայն  
երկու շաբթով բանդ զնել: Հասարակութեան  
առաջապէմ և ապագայ խօստացող դասա-  
կարգերում եղած թշնամիների նկատմամբ

մեծահողութիւն իսկ մեռնող դասակարգեցում՝  
գտնւած թնամիների վերաբերմամբ անխնայ վե-  
րաբերունք երեան է գալիս նաև պրօլետարա-  
կան դատարանի պրակտիկայում։

Իսկ ինչ վերաբերում է այն պատիժներին  
որ պրօլետարական դատարանը գործազրում է  
ոչ հակայեղափոխական բնոյթ ունեցող յան-  
ցանքների նկատմամբ, — դրանք հիմնովին տար-  
բերուում են բուրժուական դատարանի պատիժ-  
ներից։ Այդ ինքնին հասկանալի է։ Բուրժուա-  
կան հասարակութեան մէջ կտտարւող յանցանք-  
ների խոշոր մեծամասնութիւնը հանդիսանում է՝  
կամ սեփականութեան իրաւունքի դէմ գործած  
յանցանքներ, կամ այնպիսի յանցանքներ, որոնք  
այսպէս թէ այնպէս, կապւած են սեփականու-  
թեան հետեւնական է, որ բուրժուական պետու-  
թիւնը վրէժխնդիր պիտի լինէր յանցանքների  
հանդէպ և այդ հասարակութեան պատիժները  
իրենցից ներկայացնում են կատաղած սեփա-  
կանատէրի վրէժի զանազան ձեեր։ Նոյնքան  
անմիտ էին և անմիտ են պատիժները պատա-  
հական բնոյթ կրող յանցանքների կամ այնպի-  
սի յանցանքների համար, որոնք կապւած են  
բուրժուական հասարակութեան փոխյարաբե-  
րութիւնների ընդհանուր անկատարելիութեան  
հետ (ընտանեկան, սիրային հանդամանք ունե-  
ցող յանցանքներ, ալկօհօլիկումի և այլասեռման

հետևանքով գործած յացնանքներ, տգիտութեան  
և սոցիալական ինստինքտների ճնշման պատ-  
ճառով գործած յանցանքներ (և այլն)։ Պրօլետա-  
րական դատարանը ստիպւած է գործ ունենալ  
այնպիսի յանցանքների հետ, որոնց հիմքը պատ-  
րաստել է բուրժուական հասարակութիւնը։ Պրօ-  
լետարական դատարանը հին ոէժիմից ընդունեց  
այդ ոէժիմի տակդաստիարակւած պրօֆեսիոնալ  
յանցագործների մի ամբողջ կազր։ Պրօլետարա-  
կան դատարանը միանգամայն հեռու է վրէժ-  
խնդրութիւնից։ Նա չի կարող մարդկանցից  
վրէժխնդիր լինել նրա համար, որ նրանք բուր-  
ժուական հասարակութեան մէջ են ապրել։

Դրա համար էլ մեր ժողովրդական դատա-  
րանների պատիժները այժմ արդէն արտացոլում  
են արդարադատութեան մէջ կատարւած ամրող  
յեղափոխութիւնը։ Զատ յաճախ է կիրառում  
պայմանական կերպով դատապարտելը, — այդ  
պատիժ է առանց պատժի, որի զլխաւոր նը-  
պատակն է նախազգուշացնել յանցանքի կրկնո-  
գութիւնը։ Կիրառում է հասարակական յանդի-  
մանութիւն, — այդ մի միջոց է, որ ոյժ ունի  
միայն արտադասակարգային հասարակութեան  
մէջ։ և այդ միջոցը կիրառելիս, իհարկէ, ինկա-  
տի է առնւում հասարակական զիտակցութեան  
աստիճանը, ինչպէս և յանցագործի կա-  
տարած հասարակական աշխատանքը։ Բանտար-

գելութիւնն առանց աշխատանքի, առհասարակ  
վ սակար է. այդ հարկադրական պարագիտիզմը  
որ սյնքան յաճախ կիրառում էր ցարիզմի օ-  
րով փոխարինում է հասարակական ուժեղա-  
ցըրած աշխատանքներով. Առհասարակ, երբ  
յանցագործը որևէ է վնաս է պատճառում հա-  
սարակութեանը, պրօլետարական դատարանը  
ձգտում է մեղաւորին պատժած լինել՝ ստիպե-  
լով նրան հասարակական ծանր աշխատանքներ  
կատարել. Վերջապէս, երբ դատարանը գործ է  
ունենում քեցիդիվիստի հետ, որը նոյնիսկ սահ-  
մանած իր պատիճը կրելուց յետոյ ազատ ար-  
ձակւելով՝ պիտի վտանգէ ուրիշ քաղաքացիների  
կեանքը, զործադրում է յանցագործի առանձ-  
նացում. այսինքն նման յանցագործ տիպին թոյլ  
չի տրւում հասարակութեան մէջ ապրել, ըստ  
որում նրան տրւում է ամին հնարաւորութիւն  
բարոյապէս վերածնելու համար:

Թւած բոլոր բարեփոխած միջոցները մեծ  
մասամբ պաշտպանել են նաև բուրժուական իւ-  
րիստներ. Սակայն այդ միջոցները բուրժուական  
հասարակութեան մէջ մնացիլ են որպէս ցնորդներ:  
Դրանք կարող էր սկսել և կեանք մտցնել մի-  
այն յաղթող պրօլետարիատը.

#### 6. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՊԱԳԱՅՆ

Ինչ վերտարերում է յեղափոխական տրիբու-  
նալին՝ պրօլետորական դատարանի այդ ձեն ևս

ոչ մի ապագայ չունի, ինչպէս՝ սպիտակ գվար-  
դիային յաղթող կաբմիք Բանակը, ինչպէս՝ ար-  
տակարգ կօմիսիաները, ինչպէս՝ այն բոլոր օր-  
գանները, որոնք պրօլետարիատի ձեռքով ըս-  
տեղծւած են քաղաքացիական չաւարտած պա-  
տերազմի ժամանակաշրջանում. Այդ օրգաններին  
կարիք չի զգացւի և դրանք կ'վերացւեն՝ երբ  
պրօլետարիատը վերջնականապէս կը յաղթէ  
բուրժուական հոկայեղափոխութիւնը:

Ընդհակառակը, պրօլետարական դատա-  
րանը՝ ժողովրդական ընտրովի գատարանը, ան-  
կասկած, քաղաքացիական պատերազմի վերջն է  
ապրում և գեռ երկար ժամանակ իր դատավը-  
ճիոններով պէտք է մարքէ բեկորները բուրժու-  
ական հասարակութեան՝ նրա բաղմատեսակ ար-  
տայալտութիւնների մէջ։ Դասակարգերի ոչն-  
շացումով իսկոյն չեն ոչնշացւում ոչ դասակար-  
գալին հոգերանութիւնը, որը միշտ շարունա-  
կում է իրեն ծնունդ տուղ հասարակական փոխ-  
յարաբերութիւններից աւելի երկար ապրել, և  
ոչ էլ դասակարգային բնազնիքն ու սովորու-  
թիւնները. Բացի զրանից, դասակարգերի ոշըն-  
շացման պրօցեսը կարող է շատ երկարել. Մի-  
այն հետզհետէ կարելի է բուրժուազիային դար-  
ձնել աշխատաւոր մարդկանց մի զբուպատա-  
գիւղացիներին սոցիստիստական հասարակու-  
թեան աշխատաւորներ։ Վերջին պրօցեսը շատ

երկար կը տեի և դատական բնոյթ ունեցող պրօցեսներով հարուստ կը լինի: Նոյնպէս և սպառման միջոցների մասնաւոր սեփականութիւնը, որ նախորդում է զուտ կոմունիստական բաշխմանը և շատ առիթներ է տալիս զանցառութիւնների:

Վերջապէս հասարակութեան դէմ զործած այն յանցանքները, որոնք կատարւած են առանձին ժարդկանց անհատական էգոիզմի հետեանքով, ինչպէս և հասարակական բարորութիւնը խանկարող ամեն տեսակ երեսյթներ դեռ երկու ժամանակ դատարանական քննութեան առ ոկայ կ'զառնան: Ճիշտ է, դատարանն այն ժա նանակ կը փօխէ իր բնոյթը. հետպհետէ, պետութեան ոչնչացմամբ, նա կը դառնայ հասարակական կարծիքի արտայայտութեան օրգան, մօտենալով ընկերական զատարանի բնոյթին, որի դատավճիռները բռնի ճանապարհով չեն ի կատար պծւռմ և մրայն բարոյական նշանակութիւն են ունենում:

Թուխարքն

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բուրժուական և պրոլետարական դատարանների մասին կոմունիստական գրականութիւն համարեա թէ չկայ. Հին զործերից կարելի է յանձնարարել հետեալները. Կ. Մարկ: «Речь перед судом присяжных» (Кельскій процесс коммунистов). Энгельс: «Происхож-



38.732